ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀԱՇՁԲ-8-2

ք. Երևան 03. 11. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Պատվիրատու մի կողմից, և "Մակսիմ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Գասպարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝, այսուհետև՝ Կատարող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 17 040 000 (տասնյոթ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե կատարված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 10.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է՝ 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.111 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Մակսիմ" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք.Երևան, Բաբաջանյան 1, բն. 15
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	'Արարատբանկ' ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023961910100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 01260794
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	Տնօրեն
Յ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԲԸՀՀԱԾՁԲ-8-2 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Տեխնիկական բնութագրեր
1	'Մարշալ Բաղրամյան' մեդալ	Մեդալը պատրաստված է մետաղից, որը ոսկեպատված է: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի դիմերեսին ուռուցիկ պատկերված է ԽՍՀՄ հերոս Մարշալ Բաղրամյանի դիմաքանդակը: Մեդալի դարձերեսին՝ ուռուցիկ մեծատառերով, հայերեն գրված են «ՍԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ» բառերը, որոնցից ներքև՝ 100 թիվը, որի առաջին զրոյի մեջ գրված է «1897» թիվը, երկրորդի մեջ՝ «1997» թիվը: Մեդալը համազգեստին ամրանում է 45մմ լայնություն և 50մմ բարձրություն ունեցող հնգանկյուն կախիչի միջոցով: Հնգանկյուն կախիչի ժապավենը եռագույն է՝ կարմիր, կապույտ և նարնջագույն:
2	'Անդրանիկ Օզանյան' մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի վերնամասում ուռուցիկ հայերեն տառերով, կորաձև ժապավենի վրա, գրված են «ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ» բառերը, որից ներքև պատկերված է Անդրանիկ Օզանյանի դիմաքանդակը: Մեդալի դարձերեսին՝ կենտրոնում, հայերեն տառերով գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի մասում՝ մեդալի համարը և տարեթիվը: Մեդալը համազգեստին ամրանում է 45մմ լայնություն և 50մմ բարձրություն ունեցող հնգանկյուն կախիչի միջոցով: Հնգանկյուն կախիչի ժապավենը մոխրագույն է, որի աջ կողմում, եզրից 3մմ հեռավորության վրա, գտնվում է 8մմ լայնությամբ կապույտ եզրաշերտ:
3	'Գարեգին Նժդեհ' մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի վերնամասում ուռուցիկ հայերեն տառերով, կորաձև ժապավենի վրա, գրված են «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» բառերը, որից ներքև պատկերված է Գարեգին Նժդեհի դիմաքանդակը: Մեդալի դարձերեսին՝ կենտրոնում, հայերեն տառերով գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի մասում՝ մեդալի համարը և տարեթիվը: Մեդալը համազգեստին ամրանում է 45մմ լայնություն և 50մմ բարձրություն ունեցող հնգանկյուն կախիչի միջոցով: Հնգանկյուն կախիչի ժապավենը մոխրագույն է, որի աջ կողմում, եզրից 3մմ հեռավորության վրա, գտնվում է 8մմ լայնությամբ նարնջագույն եզրաշերտ:
4	'Վազգեն Սարգսյան' մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի վերնամասում ուռուցիկ հայերեն տառերով, կորաձև ժապավենի վրա, գրված են «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» բառերը, որից ներքև պատկերված է Վազգեն Սարգսյանի դիմաքանդակը: Մեդալի դարձերեսին՝ կենտրոնում, հայերեն տառերով գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի մասում՝ մեդալի համարը և տարեթիվը: Մեդալը համազգեստին ամրանում է 45մմ լայնություն և 50մմ բարձրություն ունեցող հնգանկյուն կախիչի միջոցով: Հնգանկյուն կախիչի ժապավենը կարմիր է:
5	'Ծովակալ Իսակով' մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի վերնամասում ուռուցիկ հայերեն տառերով, կորաձև ժապավենի վրա, գրված են «ԾՈՎԱԿԱԼ Հ.Ս.ԻՍԱԿՈՎ» բառերը, որից ներքև պատկերված է ծովակալի դիմաքանդակը: Մեդալի դարձերեսին՝ ներքևամասում, գրված են մեդալի համարը և տարեթիվը: Մեդալը համազգեստին ամրանում է 45մմ լայնություն և 50մմ բարձրություն ունեցող հնգանկյուն կախիչի միջոցով: Հնգանկյուն կախիչի ժապավենը սպիտակ է, որի եզրերով ձգվում են 3մմ լայնությամբ կապույտ եզրաշերտեր:
6	'Ռազմական համագործակցության համար' մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալի տրամագիծը՝ 35մմ, հաստությունը՝ 3մմ: Մեդալի վերնամասում կորաձև, բարձրաքանդակով գրված են «ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերը: Մեդալի միջնամասում երկու բումերանգների պատկերներն են, որոնցից ներքև Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշն է: Մեդալի ստորին մասում պատկերված է ձեռքսեղմում: Մեդալի դարձերեսի վերևի մասում կորաձև, բարձրաքանդակով գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Մեդալի դարձերեսի կենտրոնում պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որից ներքև դաջված է մեդալի հերթական համարը: «Ռազմական համագործակցության

		համար» մեդալի հնգանկյան ժապավենը կիսով չափ մուգ կապույտ է և կիսով չափ մոխրագույն: Ժապավենի մոխրագույն մասի կենտրոնում գտնվում է 6մմ լայնությամբ երկնագույն եզրաշերտ:
7	'Մարտական հերթապահության համար' 2-րդ աստիճանի մեդալ	Մեդալը պատրաստված է ոսկեպատ մետաղից: Մեդալը բազմանկյուն է, որի գագաթների առավելագույն հեռավորությունը միմյանցից 45մմ է, հաստությունը՝ 4մմ: Մեդալի դիմերեսի կենտրոնում՝ ընդհանուր ոսկեգույն երանգի վրա պատկերված է ՀՀ զինված ուժերի ոսկեգույն զինանշանը: Զինանշանին հաջորդում է նարնջագույն օղակը, որի վրա կորաձև գրված են՝ վերևամասում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ», ստորին մասում՝ «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերը: «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» և «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառերի միջև ձիթենու ճյուղեր են: Նարնջագույն օղակին հաջորդում է կապույտ օղակը, որի վրա կորաձև գրված են «ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերը, ներքևում՝ հռոմեական «II» թիվը: «ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերի և նշված թվի միջև ձիթենու ճյուղեր են: Ամբողջ նկարագրվածը տեղադրված է քսանչորս անկյուն ունեցող սուրանկյուն բազմանկյան կենտրոնում: Բազմանկյան սուր անկյուններից տասներկուսը ոսկեգույն են, մյուս տասներկուսը՝ կարմիր: Ոսկեգույն և կարմիր սուր անկյունները երեքական խմբերով հաջորդում են իրար: Մեդալի դարձերեսին՝ կենտրոնում, գրված է «6» թիվը, դրա ներքևում՝ «ՏԱՐԻ» բառը, իսկ այդ բառից ներքև՝ մեդալի համարը: «6» և «ՏԱՐԻ» բառերի շուրջը կորաձև գրված են «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: «Մարտական հերթապահության համար» 2-րդ աստիճանի մեդալի հնգանկյան մոխրագույն ժապավենի ձախ կողմում պատկերված են 2մմ լայնությամբ երկու կապույտ գծեր: Մեդալի հնգանկյան աջ կողմում ուղղահայաց պատկերված է 9մմ լայնությամբ Հայաստանի Հանրապետության դրոշը:

Ծանոթություն:
Վերոհիշյալ ապրանքատեսակները մատակարարում են Երևան, Բագրևանդի 5 հասցեով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/Մ	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդհանուր գումարը ՀՀ դրամ	Աշխատանքների մատուցումը 2016թ
						դեկտեմբեր., բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
1	'Մարշալ Բաղրամյան' մեդալ	հատ	500	4 800	2 400 000	500
2	'Անդրանիկ Օզանյան' մեդալ	հատ	500	4 800	2 400 000	500
3	'Գարեգին Նժդեհ' մեդալ	հատ	500	4 800	2 400 000	500
4	'Վազգեն Սարգսյան' մեդալ	հատ	700	4 800	3 360 000	700
5	'Ծովակալ Իսակով' մեդալ	հատ	1000	4 800	4 800 000	1000
6	'Ռազմական համագործակցության համար' մեդալ	հատ	200	4 800	960 000	200
7	'Մարտական հերթապահության համար' 2-րդ աստիճանի մեդալ	հատ	150	4 800	720 000	150
Ընդհամենը՝ 17040000 (տասնյոթ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"Մակսիմ" ՍՊԸ
ք.Երևան, Բաբաջանյան 1, բն. 15
'Արարատբանկ' ԲԲԸ
Հ/Հ 1510023961910100
ՀՎՀՀ 01260794

Տնօրեն

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԲԸԱՀԱՇՁԲ-8-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ
			Դեկտեմբեր
1	'Մարշալ Բաղրամյան' մեդալ	18511180/11	2 400 000
2	'Անդրանիկ Օզանյան' մեդալ	18511180/12	2 400 000
3	'Գարեգին Նժդեհ' մեդալ	18511180/13	2 400 000
4	'Վազգեն Սարգսյան' մեդալ	18511180/14	3 360 000
5	'Ծովակալ Իսակով' մեդալ	18511180/15	4 800 000
6	'Ռազմական համագործակցության համար' մեդալ	18511180/16	960 000
7	'Մարտական հերթապահության համար' 2-րդ աստիճանի մեդալ	18511180/17	720 000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
"Մակսիմ" ՍՊԸ
ք.Երևան, Բաբաջանյան 1, բն. 15
'Արարատբանկ' ԲԲԸ
Հ/Հ 1510023961910100
ՀՎՀՀ 01260794

Տնօրեն

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԲԸԱՀԱՇՁԲ-8-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԲԸԱՀԱՇՁԲ-8-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

——————————
ազգանուն, անուն

——————————
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

——————————
ազգանուն, անուն

——————————
ստորագրություն